



Էրասմուս+ միջազգային կրեդիտային
շարժունությունն ծրագրի (Erasmus+ ICM)
շրջանակներում Տուշայի համալսարան
մեկնող ուսանողների ուղեցույց

ԵՐԵՎԱՆ 2022



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՎԻՋԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ | 3 |
| ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | 6 |
| ՀՀ-ԻՑ ՄԵԿՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ | 9 |
| ՖԻՍԿԱԼ ԿՈՂԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԱՏՆԻՑ | 11 |
| ՀՈՈՄԻՑ ՎԻՏԵՐԲՈ ԳՆԱՅՈՂ ԳՆԱՅՔԻ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ | 12 |
| ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ | 13 |
| ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 15 |
| ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.. | 16 |
| ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ | 17 |



ՎԻԶԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Իտալիայի ուսանողական վիզա դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Իտալիայի վիզա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (փաստաթղթերի ցանկը կարող եք գտնել ստորև) պետք է հանձնել TLS վիզա կենտրոն՝ ք. Երևան, Վարդանանց փ. 4/50, որի համար անհրաժեշտ է նախապես օր և ժամ ամրագրել: Ամրագրման համար անհրաժեշտ է նախ առցանց գրանցվել հետևյալ հղմամբ՝ <https://it.tlscontact.com/am/evn/register.php?l=hy>: Խմբերի դեպքում պետք է գրանցվել մեկ հաշվով՝ մեկ համարի (M000000) ներքո: Գրանցումը կատարելու համար անհրաժեշտ է նշել էլ-փոստը, գաղտնաբառը և ընտրել <<Ստեղծել>> կոճակը, որից հետո կբացվի այլ պատուհան, որտեղ նշված կլինեն տարբեր հարցեր: Այդ հարցերին պետք է համապատասխանաբար պատասխանել <<Այո>> կամ <<Ոչ>>: Գրանցումն ավարտելուց հետո էլ-փոստին կստանաք գրանցման հաստատումը: Հաստատման նամակի մեջ նշված լինքով պետք է ակտիվացնել հաշիվը: Հաշիվն ակտիվ լինելուց հետո, մուտք լինեն հաշվի մեջ և այն էջից որտեղ նշված է <<Դիմում հայտի մշակման գործընթաց>>, պետք է գտնել <<Ստեղծել դիմում հայտ>> կոճակը: Դա սեղմելուց հետո կբացվի հայտ, որտեղ պետք է լրացնել հետևյալ տվյալները՝ ճանապարհորդության նպատակը (եթե մեկնում եք մինչև 89 օր ժամկետով, ապա անհրաժեշտ է ընտրել <<Ուսուցում՝ ուսուցում 90 օրից պակաս>> ենթատեսակը, որը համարվում է C կատեգորիայի վիզա, իսկ եթե մեկնում եք 90 և ավելի օրով, ապա անհրաժեշտ է ընտրել <<Երկարաժամկետ/ազգային վիզա D՝ ուսուցում>> ենթատեսակը), անձնական տվյալները, ճամփորդական տեղեկատվությունը (եթե համակարգը չի ընդունում այս բաժնում նշված տեղեկատվությունը, ապա գրել NO) և ոչ պարտադիր այլ տեղեկատվություն: Այդ ամենը լրացնելուց հետո սեղմել <<Պատրաստ է>> կոճակը: Այնուհետև էջը հնարավորություն կտա ավելացնել այլ դիմորդի հայտ և կցել այլ մասնակիցների հայտը ձեր հայտին: Բոլորի հայտերը լրացնելուց հետո կկարողանաք բոլորը միաժամանակ հաստատել, հաստատելուց հետո համակարգը թույլ կտա օր և ժամ ամրագրել: Համակարգի հետ կապված հարցերով կարող եք դիմել TLS կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 055 909449:



Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. *Վիզայի դիմելու հայտի ձևը մեկ օրինակից՝* լրացված անգլերեն կամ իտալերեն ընթեռնելի ձեռագրով (բոլոր ներկայացվող փաստաթղթերը անհրաժեշտ է պատրաստել միևնույն լեզվով),
2. *Գործող անձնագիրը* ելքի կլոր կնիքով (եթե կենսաչափական անձնագիր չէ), որը պետք է վավեր լինի վերադարձի օրվանից հաշված ամենաքիչը 6 ամիս: Միաժամանակ անհրաժեշտ է ունենալ A4 ֆորմատի թղթի վրա արված *անձնագրի կրկնօրինակը՝* նկարի, հասցեի, առկա բոլոր վիզայի և կնիքների էջերով,
3. *2 գունավոր լուսանկար (3.5x4.5սմ չափսերի)* մինչև 6 ամիս վաղեմության (մեկը փակցնել հայտին)՝ արված սպիտակ ֆոնի վրա,
4. *Աջակցության ապահովագրության վկայագիրը* 30 000 եվրոյի չափով նվազագույն փոխհատուցմամբ, որպեսզի ծածկի բոլոր ծախսերը և վավեր լինի ճամփորդության ողջ ընթացքում: Այն կարող է լինել մեկ տարի ժամանակով մինչև 90 օր անընդմեջ կիրառման հնարավորությամբ: Եթե նախատեսում եք Իտալիայում դիմել նաև կացության քարտի, ապա կարող եք ողջ ընթացքի համար ապահովագրությունը վերցնել ՀՀ-ում: Օրինակ՝ 6 ամիս այնտեղ լինելու դեպքում կարելի է վերցնել երկու մեկ տարվա համար ապահովագրություն յուրաքանչյուրը 90 օր կիրառման հնարավորությամբ,
5. *Տոմսի ամրագրումը՝* հրավերի օրերով կամ հրավերի օրերից 2-3 օր շուտ և/կամ ուշ,
6. *Ուսման ծրագրի վերաբերյալ հաստատող փաստաթղթերը՝ պայմանագիր և հրավեր:* Հրավերում անհրաժեշտ է նշված լինի ծրագրի համարը, անվանումը, մասնակցի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, ծրագրին մասնակցելու ժամկետը, մնալու վայրի տվյալները, ֆինանսավորման մասին և այլն,
7. *Վիզայի գումարը՝* 28 600 դրամ (եթե որպես կրթական ծրագիր կարիք չլինի վճարել, ապա գործերը հանձնելիս ձեզ կտեղեկացնեն), վիզա կենտրոնի վճարը՝ 19 450 դրամ (նշված գումարների չափը կարող է փոփոխվել՝ կախված եվրոյի կուրսի տատանումից),
8. Եթե հրավերի կամ պայմանագրի մեջ նշված է, որ ձեր բոլոր ծախսերը (ներառյալ սննդի, տրանսպորտի) հոգում է հրավիրող կողմը, ապա ֆինանսական ռեսուրսների մասին բանկային փաստաթուղթ՝ քաղվածք, հիմնականում անհրաժեշտ չէ: Սակայն ցանկության դեպքում կարող եք ներկայացնել *բանկային հաշվի 3-6 ամսվա քաղվածքը,*



9. Իտալիայում բնակության վայրի (accomodation) վերաբերյալ հավաստող փաստաթուղթը, օրինակ՝ հյուրանոցի ամրագրումը արժեքի վերաբերյալ տեղեկատվությամբ (եթե դա ուսանողն է ամրագրում): Եթե բնակության վայրն ապահովում է հրավիրող կողմը, ապա ցանկալի է բնակության վայրի մասին նշված լինի նաև հրավերում կամ լինի առանձին փաստաթղթով,
10. Տեղեկանք ուսումնական հաստատության կողմից, որտեղ նշված է ՀՀ-ում անձի ուսանող և նշված ծրագրի մասնակից լինելը,
11. Հայաստանի Հանրապետությունում հայտատուի ունեցած տնտեսական ու սոցիալական կապերի (օրինակ կարող էք ներկայացնել ընտանիքի անդամների, ամուսնացած լինելու դեպքում կնոջ/ամուսնու, երեխաների անձնագրերի կրկնօրինակները) մասին փաստաթղթեր,

Կ.Գ. Եթե փաստաթղթերը հանձնելու էք դեսպանատանը, այլ ոչ թե վիզա կենտրոնում, ապա հրավերի նամակն անհրաժեշտ է ներկայացնել երկու օրինակից և դեսպանատան աշխատակցին խնդրել մեկ օրինակ կնքված հետ վերադարձնել անձնագրի հետ միասին: Դեսպանատան կողմից կնքված երկրորդ օրինակը պետք է պահել Իտալիա տանելու համար:

Վիզայի փաստաթղթերը պատրաստելու և վիզա կենտրոն հանձնելու հետ կապված հարցերի դեպքում կարող էք գրել (anna.smbatyan@isec.am) կամ զանգահարել (055 303899) Աննա Սմբատյանին:



ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Ազգանուն (համաձայն անձնագրի),
2. Նախկին ազգանուն, եթե առկա չէ, ապա բաց էք թողնում կամ նշում էք N/A (Non available),
3. Անուն (համաձայն անձնագրի),
4. Ծննդյան տվյալներ՝ օր/ամիս/տարի,
5. Ծննդավայր (գյուղ/քաղաք),
6. Ծննդավայր (երկիր),
7. Ներկայիս քաղաքացիությունը (նշել այն երկիրը, որի անձնագրով դիմում էք վիզայի համար), երկրորդ քաղաքացիություն ունենալու դեպքում երկրորդ տողում նշել այդ քաղաքացիությունը,
8. Սեռը՝ նշել լատինատառ վեաձև (V) նշանով,
9. Քաղաքացիությունը՝ նշել լատինատառ վեաձև (V) նշանով,
10. Սա վերաբերվում է անչափահասներին, ուստի այս տողը բաց թողնել կամ նշել N/A,
11. Ազգային անհատական համարը (բաց թողնել),
12. Ճամփորդական փաստաթղթի (անձնագրի) տեսակը՝ սովորական անձնագիր՝ նշել լատինատառ վեաձև (V) նշանով,
13. Ճամփորդական փաստաթղթի համարը,
14. Ճամփորդական փաստաթղթի տրման ժամկետը՝ օր/ամիս/տարի,
15. Ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը՝ օր/ամիս/տարի,
16. Ճամփորդական փաստաթղթը ում կողմից է տրված՝ նշել անձնագրում նշված համարը և երկիրը,
17. Դիմողի բնակության հասցեն՝ փողոցը, քաղաքը, փոստային կոդը, երկիրը, էլ-հասցեն (e-mail), հաջորդ բաժնում հեռախոսահամարը, որտեղ ցանկալի է նշել ձեռքի համարը (00 000000), կարող էք նեռառել նաև ՀՀ կոդը +374 00 000000,
18. Ներկայիս քաղաքացիության երկրից բացի մեկ այլ երկրում բնակվելու իրավունք ունենալու դեպքում նշել երկրորդ տողը և լրացնել բնակության փաստաթղթի համարը, վավերականության ժամկետը՝ օր/ամիս/տարի,
19. Ներկայիս պաշտոնը - եթե դիմում էք որպես ուսանող, կարող էք նշել միայն ուսումնական հաստատության անվանումը և ձեր բաժնի անվանումը: Եթե նշում էք նաև ձեր աշխատավայրը, ապա փաստաթղթերի հետ պարտադիր է

ներկայացնել նաև գործատուի կողմից տրված տեղեկանք (գործատուի կողմից տրված տեղեկանքում պետք է լինի տվյալ աշխատավայր ընդունվելու տարեթիվը, պաշտոնը, ամսական աշխատավարձի չափը: Տեղեկանքի վաղեմության ժամկետը կարող է լինել մինչև 30 օր,

20. Նշել ուսման վայրի/գործատուի անունը, հասցեն, հեռախոսահամարը,
21. Վիզայի դիմելու նպատակը՝ նշել ուսում տարբերակը լատինատառ վեաձև (V) նշանով,
22. Այցելության քաղաքը՝ նշել այն վերջնակետը, որտեղ մնալու եք, այլ ոչ թե այդ երկիր մուտք լինելու/գործելու առաջին քաղաքը,
23. Եթե թոնիչքի տարանցիկ (տրանզիտ) երկիրը հանդիսանում է Եվրամիության անդամ որևէ երկիր¹, ապա պետք է նշել այդ տարանցիկ երկրի անվանումը: Եթե մեկնում եք մեկ տարանցիկ երկրով, որը հանդիսանում է Եվրամիության ոչ անդամ երկիր, օրինակ Կիև, ապա անհրաժեշտ է նշել շենգենյան համաձայնագրի երկրի առաջին մուտքի երկիրը՝ Կիևով մեկնելու դեպքում Իտալիա,
24. Պահանջվող մուտքերի քանակը՝ նշել բազմակի,
25. Այցի տևողությունը՝ նշել այն օրերի քանակը, որ ձեզ անհրաժեշտ է այնտեղ անընդմեջ մնալու համար, օրերի քանակը հաշվարկել համաձայն ամրագրված տոմսերի,
26. Վերջին երեք տարվա ընթացքում տրված Շենգենյան² մուտքի արտոնագրերը՝ առկայության դեպքում նշել բոլոր նախորդ երեք տարվա վաղեմության շենգենյան վիզաները: Եթե օրինակ ստացել եք բազմակի (մուլտի) վիզա, ապա նշել վիզայի մեջ նշված միջակայքը, այլ ոչ թե այն օրերը, որի ընթացքում եղել եք տվյալ երկրում,

1 Եվրամիության անդամ երկրներ՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Հունգարիա, Հունաստան, Գերմանիա, Դանիա, Իտալիա, Իռլանդիա, Իսպանիա, Կիպրոս, Լյուքսեմբուրգ, Լատվիա, Լիտվա, Մալթա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովենիա, Սլովակիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Խորվաթիա, Չեխիա, Շվեդիա, Էստոնիա:

2 Շենգենյան համաձայնության երկրները՝ Ավստրիա, Բելգիա, Հունգարիա, Հունաստան, Գերմանիա, Դանիա, Իտալիա, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Լատվիա, Լիտվա, Մալթա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Չեխիա, Շվեդիա, Էստոնիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Շվեյցարիա: Հետևյալ քաղաք-պետությունները նույնպես շենգենյան գոտու մեջ են՝ Մոնակո, Սան Մարինո, Վատիկան:



27. Նախկինում Շենգենյան մուտքի արտոնագրի դիմում ներկայացնելիս հանձնել էք մատնահետք՝ եթե հանձնել էք, բայց չէք հիշում օրը, ապա պարտադիր նշել <<Այո>> կետը, իսկ օրը բաց թողնել,
28. Բաց թողնել,
29. Շենգենյան տարածք ժամանելու նախատեսվող ամսաթիվը՝ նշել ըստ տոմսի ամրագրման,
30. Շենգենյան տարածքից մեկնելու ամսաթիվը՝ նշել ըստ տոմսի ամրագրման,
31. Իտալիայում բնակվելու հասցե՝ նշել Իտալիայում նախատեսվող կացության վայրի հասցեն,
32. Հրավիրող կազմակերպության/համալսարանի անվանումը, հասցեն: Ներքևում նշել հրավերի վրա նշված անձի տվյալները՝ անուն, ազգանուն, հասցե, հեռախոս, էլ-փոստ, ֆաքս,
33. Դիմողի կացության և ճամփորդության ծախսերը հոգում են՝ եթե ձեր բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը, որի տվյալները նշել էք 31, 32 կետերում, ապա այստեղ նշել աջ կողմի բաժնի առաջին կետը, որից հետո որպես ֆինանսական միջոցներ նշել տրամադրված կացարան, կացության ընթացքում բոլոր ծախսերի ստանձնում, նախապես վճարված փոխադրամիջոց,
34. Եթե անմիջապես տան անդամներ՝ ծնողներ, քույր, եղբայր չունեք Եվրամիության որևէ երկրում, Եվրոպական տնտեսական համագործակցության երկրներում³ և Շվեյցարիայում ապա 34, 35 կետերը անհրաժեշտ է բաց թողնել,
35. Բաց թողնել,
36. Վայրը և ամսաթիվը՝ նշել գործերը հանձնելու օրվա ամիս/ամսաթիվը և այն քաղաքը (Երևան) որտեղ հանձնում էք գործերը, նույնը գրել հայտի վերջին տողում,
37. Ստորագրություն՝ համաձայն անձնագրի ստորագրել 37 կետում և նաև հայտի վերջին տողում:

³ Եվրոպական տնտեսական համագործակցության երկրներ՝ Ֆրանսիա, ԳՖՀ, Իտալիա, Բելգիա, Նիդերլանդներ, Լյուքսեմբուրգ: Նաև՝ Մեծ Բրիտանիա, Դանիա, Իռլանդիա:
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին



ՀՀ-ԻՑ ՄԵԿՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Վիզայի դիմելու փաստաթղթերի փաթեթի համար անհրաժեշտ տոմսերի անվճար ամրագրումը (booking)՝ կարող էք ձեռք բերել որևէ տուրիստական կազմակերպությունից: Տոմսերը, ինչպես նշվել է, անհրաժեշտ է վերցնել հրավերի օրերով կամ 2-3 օր ուշ և/կամ շուտ:

ՀՀ-ից Հոմ մեկնելու և վերադառնալու տոմսեր կարելի է գնել տուրիստական կազմակերպություններից: Իսկ ավելի մատչելի տարբերակներ կարելի է գտնել տարբեր կայքերից: Տարբեր ավիաընկերությունների թռիչքների հավաքական տեղեկատվություն կարող էք գտնել, օրինակ, հետևյալ կայքերից՝ <https://www.edreams.com/>, <https://www.skyscanner.ru/>, <https://www.kiwi.com/>: Բայց որպես խորհուրդ տոմսերը ընտրելուց հետո դրանք գնել տվյալ ավիաընկերության կայքից, քանզի այդպես ավելի ապահով է և բացակայում է միջնորդ կայքի հավելավճարը:

Եվրոպա մեկնելիս եթե տարանցիկ երկիրը Շենգենյան համաձայնագրի երկիր է, ապա ձեր փաստաթղթերը (հրավեր, վիզա և այլն) ստուգվում է առաջին շենգենյան երկիր մուտք գործելիս:

Վերոնշյալ նմանատիպ կայք, որտեղ կարելի է գտնել հավաքական տեղեկատվություն Եվրոպական երկրների միջև տարբեր չվերթների, գնացքի, ավտոբուսի տոմսերի մասին, կարող էք փնտրել այստեղ՝ <https://www.omio.com/> : Նույն սկզբունքով վերջնական տոմսը խորհուրդ է տրվում գնել տվյալ ավիաընկերության/ կազմակերպության կայքից:

Եվրոպական երկրներում միջազգային գործող մատչելի փոխադրման միջոցներ՝

- Թռիչքներ՝ <https://wizzair.com/>, <https://www.ryanair.com/gb/en>, <https://www.easyjet.com/ru>,
- Ավտոբուսներ՝ <https://www.flixbus.ru/>,
- Արագ գնացքներ՝ <https://www.sncf.com/en>, <https://www.bahn.de/> :

Ցանկացած տոմս գնելիս պետք է ուշադիր լինել, որ տոմսը լինի ուղեբեռով: Յուրաքանչյուր ուղղության համար սահմանված ուղեբեռը կարող է լինել 23 կամ 32 կգ: Տոմսերը գնելիս հաշվի առնել, որ թռիչքի օրերը (հատկապես վերադարձի թռիչքը) փոփոխման ենթակա լինեն: Ավելի մատչելի լինելու համար ցանկալի է երկու ուղղության՝ մեկնելու և վերադառնալու տոմսերը, գնել միաժամանակ և նույն ավիաընկերությունից:



COVID19-ի սահմանափակումների հետ կապված խորհուրդ է տրվում գնել տոմս, որի տարանցիկ երկիրը հանդիսանում է որևէ Շենգենյան երկիր: Քանի որ այս պահին Իտալիա մեկնելիս բոլոր ուղևորների փաստաթղթերը ստուգվում են, և հանրային տրանսպորտից օգտվելը սահմանափակված է նոր ժամանողների համար: Մեր առաջարկն է. մեկնել Իտալիա տրանզիտային թռիչքով, քանի որ այդպես երկրորդ թռիչքը համարվում է ներքին թռիչք ու ձեր փաստաթղթերը այլևս չեն ստուգվում, և դա ապահովագրում է Իտալիայի սահմանապահներին չհանդիպելը, ովքեր կարող են ձեզնից՝ COVID19-ի սահմանափակումներից ելնելով պահանջել անցնել մեկուսացման: Թռիչքի հետ կապված պարտադիր է տպված տարբերակով ունենալ Եվրոպական QR կոդը և PCR թեստի բացասական արդյունքը, որի վաղեմությունը կարող է լինել ամենաշատը 72 ժամ: Եվրոպական QR կոդը կարող եք գտնել Armed հավելվածից՝ սեղմելով ԵՄ դրոշի վրա, որից հետո ընտրել ներբեռնեք փաստաթուղթը ԵՄ, որից հետո կբացվի եվրոպական QR-ը:



ՖԻՍԿԱԼ ԿՈՂԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԱՏՆԻՑ

Ֆիսկալ կողը համապատասխանում է հարկային կողին, որը անհրաժեշտ է Իտալիայում գումարի փոխանցումներ ստանալու համար: Այն տրամադրվում է անվճար, որը ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախապես զանգահարել Իտալիայի դեսպանատուն (հեռ. 012 542335, ներքին 109) և գրանցվել դեսպանատնից վերցնելու համար:

COVID19-ի հետ կապված այս պահին ֆիսկալ կողը, որը տրամադրում է Իտալիայի դեսպանատունը, Իտալիայում չի ընդունվում: Այս պահին ստացած Իտալիայի վիզան անհրաժեշտ է ուղարկել Իտալիա, որտեղ համալսարանը դիմում է ֆիսկալ կողերի համար: Այնտեղից վերցրած ֆիսկալ կողերն աշխատում են նաև բանկային գործարքների համար:



ՀՈՈՄԻՑ ՎԻՏԵՐՐՈ ԳՆԱՑՈՂ ԳՆԱՑՔԻ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ավիատոմսը գնելիս անհրաժեշտ է հաշվի առնել Հոռոմ ժամանելու և Վիտերբո գնալու գնացքի ժամերը: Անհրաժեշտ է Հոռոմ հասնելու ժամից հետո հաշվարկել գնացքի կայարան հասնելու ժամանակը և, համապատասխան դրա, ընտրել գնացքի տոմսը:

Օդանավակայան ժամանելուց հետո պետք է քաղաքային տրանսպորտով հասնել Վիտերբո գնացող կանգառ՝ Ռոմա Տրաստևերե (Roma Trastevere): Վիտերբո (Viterbo) գնացող գնացքը Վիտերբոյում ունի հետևյալ կանգառներ՝ Վիտերբո Պորտա Ռոմանա (Viterbo Porta Romana) և Վիտերբո Պորտա Ֆիորենտինա (Viterbo Porta Fiorentina): Կանգառը ընտրելիս պետք է հաշվի առնել ուսանողի ֆակուլտետի տեղակայումը: Էկոլոգիայի և կենսաբանության դեպարտամենտը (տեղադրությունը տե՛ս 18-25 էջերում)՝ DEB-ը, գտնվում է Վիտերբո Պորտա Ֆիորենտինա կանգառին մոտ, իսկ Լեզվաբանության, գրականության, պատմության, փիլիսոփայության և իրավագիտության դեպարտամենտը (տեղադրությունը տե՛ս 18-25 էջերում)՝ DISUCOM-ը, որտեղ նաև իտալերեն դասերն են անցկացվում, գտնվում է Վիտերբո Պորտա Ռոմանա կանգառին մոտ:

Վիտերբո գնացող գնացքի տոմսեր կարելի է ձեռք բերել հետևյալ կայքից՝ <https://www.trenitalia.com/en.html>՝ ընտրելով Fiumicino Aeroporto - Viterbo (Tutte Le Stazioni): Առաջին գնացքը մեկնում է առավոտյան 5:57 (AM), որից հետո գրեթե յուրաքանչյուր ժամը մեկ մեկնում է հաջորդ գնացքը: Իսկ վերջին գնացքը մեկնում է երեկոյան 21:12 (PM):



ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տուշայի համալսարանում դասախոսություններն իրականացվում են ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով՝ live հեռարձակմամբ: Դասերին մասնակցելն ազատ է, սակայն հեռարձակվող դասին մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել, ունենալ այդ թույլտվությունն ու հղումը մասնակցելու համար: Հեռավար դասընթացը հնարավորություն է տալիս դասը ձայնագրել: Էկոլոգիայի և կենսաբանության դեպարտամենտի (տեղադրությունը տե՛ս 18-25 էջերում)՝ DEB-ի դասերը հիմնականում իրականացվում են առկա ձևաչափով և այնտեղ դասին ներկա լինելը շատ ավելի ցանկալի է: Այնտեղ դասերը անցկացվում են գրեթե ամեն օր, երբեմն օրվա ընթացքում երկու անգամ՝ տարբեր ժամերի: Այդ իսկ պատճառով ցանկալի է, որ բնակության վայրը (հատկապես եթե այն վարձակալված բնակարան է) մոտ լինի ֆակուլտետի տարածքին: Տնտեսագիտություն և կառավարում (տեղադրությունը տե՛ս 18-25 էջերում)՝ DEIM դեպարտամենտի դասերը համեմատաբար ավելի քիչ են անցկացվում և նաև առկա ձևաչափով դասերին ներկա լինելու անհրաժեշտությունն ավելի քիչ է: Իտալերենի դասերը իրականացվում են լեզվաբանության, գրականության, պատմության, փիլիսոփայության և իրավագիտության դեպարտամենտում (տեղադրությունը տե՛ս 18-25 էջերում)՝ DISUCOM-ում կամ ռեկտորատում, որտեղ կարելի է հասնել առանց տրանսպորտից օգտվելու: Այստեղ է գտնվում նաև ուսանողական ճաշարանը:

Կացությունը. Վիա Կարդարելի փողոցում գտնվող հանրակացարանը գտնվում է Էկոլոգիայի և կենսաբանության դեպարտամենտի՝ DEB-ի մոտ, իսկ Տնտեսագիտություն և կառավարում՝ DEIM դեպարտամենտը մոտ է Սան Սիստոյի հանրակացարանին: Հանրակացարանում մնալու համար անհրաժեշտ է ՀՀ պոլիլինիկայից վերցնել առողջության մասին տեղեկանք, որն անհրաժեշտ է նոտարական թարգմանությամբ ունենալ՝ Իտալիայում ներկայացնելու համար: Հանրակացարանում տեղ ամրագրելու համար անհրաժեշտ է վերջին ամսվա համար նախապես դեպոզիտ վճարել:

Հանրակացարանը ցանկալի է ամրագրել Իտալական կողմի համակարգողի միջնորդությամբ: Հանրակացարանների մեկ ամսվա գինը մագիստրատուրայի ուսանողների համար արժե 187 եվրո: Հանրակացարանում ուսանողի կողմից հյուրընկալվող յուրաքանչյուր անձի համար գանձվում է գիշերակաց:

Հանրակացարաններ՝



- Սան Սիստո <http://www.sansistohostel.com/> այս հանրակացարանում հիմնականում երկտեղանի սենյակներ են:
- Իլ Վիլինո http://ilvillinodiviterbo.it/w/?page_id=128 հանրակացարան, որտեղ տեղ ամրագրել հնարավոր է հետևյալ հղմամբ՝ https://docs.google.com/forms/d/1K3lvrQFhR0prLgMdT256ni1OHlibvb6YfhT-9gDjoLQ/viewform?edit_requested=true :
- Վիա Կարդարելա հանրակացարանի գնացանկը՝
 - ✓ Մեկ տեղանոց սենյակ, որի մեկ օրվա արժեքը 35 եվրո է, որն իր մեջ ներառում է առանձին լոգարան և նախաճաշ,
 - ✓ Երկտեղանոց սենյակ, որի մեկ օրվա արժեքը 55 եվրո է (27 եվրո յուրաքանչյուրի համար), որն իր մեջ ներառում է ընդհանուր լոգարան և նախաճաշ:

Հանրակացարանի խոհանոցները ընդհանուր են բոլորի համար, որտեղ կարելի է սնունդ պատրաստել:

Վարձակալվող բնակարաններ ձեռք բերելու համար նախապես անհրաժեշտ է վճարել առաջին ամսվա վարձը և վերջին ամսվա դեպոզիտը: Վարձակալությամբ բնակարաններ կարելի է փնտրել հետևյալ էջերից՝

<https://www.immobiliare.it/annunci/93012214/>

<https://www.stanzasemplice.com/en/apartments/viterbo>

www.subito.it

www.immobiliare.it

www.idealista.it



ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ծրագրով հասանելիք գումարը հնարավորինս շուտ ստանալու համար մինչ Իտալիա մեկնելը պետք է էլեկտրոնային տարբերակով Տուշայի համալսարանի համակարգողին ուղարկել հետևյալ փաստաթղթերը՝ անձնագիրը, վիզայի էջը, առողջական ապահովագրությունը, լրացված վարկային ձևաթուղթը (credit form), դրամաշնորհի պայմանագրի ամբողջական լրացված և ստորագրված տարբերակը և հարկային ֆիսկալ կոդը: Այդ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո, 45 օրացույցային օրվա ընթացքում ընդունող համալսարանն ուսանողի անհատական բանկային հաշվին կփոխանցի անհատական աջակցության ամբողջ գումարի 80%-ը և ճանապարհորդության աջակցության 100%-ը: Անհատական աջակցության մնացորդը՝ ընդհանուր գումարի 20%-ը, կփոխանցվի միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի ժամկետի ավարտին՝ ԵՄ առցանց հարցումը լրացնելուց հետո՝ 30 օրացույցային օրվա ընթացքում:
2. Մագիստրատուրայի դասերը տեղի են ունենում երկու կիսամյակով՝
 - Առաջին՝ հոկտեմբերից-փետրվար, քննական շրջանը՝ հունվարից-փետրվար,
 - Երկրորդ՝ մարտից-հուլիս, քննական շրջանը՝ հունիսից-հուլիս:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրով նախատեսվող գումարը ուսանողը իր հաշվին կարող է ստանալ ոչ անմիջապես, ապա անհրաժեշտ է մեկնելիս ունենալ առաջիկա ծախսերի համար անհրաժեշտ գումարը: Գումարը կարող է լինել բանկային քարտերով (Master, Visa, Maestro) և/կամ կանխիկ եթե նախատեսվող ծախսերը (օրինակ տան վարձը) կատարվելու են կանխիկ,
4. Մինչ մեկնելը անհրաժեշտ է վճարել ԳԿՄԿ գալիք կիսամյակի ուսման վճարը,
5. Մեկնելուց առաջ անհրաժեշտ է ունենալ տպված տարբերակով՝ եվրոպական QR կոդը, PCR թեստի բացասական արդյունքը, որի վաղեմությունը կարող է լինել ամենաշատը 72 ժամ, տոմսը, հրավերի նամակը, ապահովագրությունը, պոլիկլինիկայի տեղեկանքը հայերեն և անգլերեն թարգմանված, անձնագրի կրկնօրինակը:



ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Տարբեր ֆակուլտետներում գնահատման համակարգը տարբեր է: Գնահատման համակարգը սահմանվում է յուրաքանչյուր ամբիոնի կողմից,
2. Ուսման ընթացքում նույն համալսարանի դասախոսների հավելյալ անվճար անզլերեն դասերին հնարավոր է մասնակցել նոյեմբերից-մայիս ամիսներին: Այդ դասերը քննական չեն համարվում, այլ պարզապես հնարավորություն են տալիս լրացնել համալսարանի բաց թողած դասերը,
3. Ուսման ընթացքում դասերին հաճախելը պարտադիր պայման չէ, քանի որ ներկայություն չի պահանջվում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննությունները բարդ են ընթանում, ապա առանց հաճախելու դժվար է քննությունները հանձնել,
4. Իտալիայում գտնվելու ընթացքում ամեն ամսվա վերջում յուրաքանչյուր ուսանող, որպես հաշվետվության, պետք է տեղեկատվություն ու նկարներ տրամադրի ԳԿՄԿ-ին,
5. Իտալերենով սովորող ուսանողները կարող են իտալերենի անվճար դասերի հաճախել, որի համար անհրաժեշտ է դասախոսի հետ անձամբ կապ հաստատել: Իտալերենի դասերը սկսում են մարտի սկզբից և տևում են 50 ժամ: Դասերը ավարտելուց հետո ուսանողը կարող է այնտեղ քննություն հանձնել և հավաստագիր ստանալ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. Ցանկալի է մեկնելիս քիչ իրեր վերցնել, մասնավորապես հիգիենայի պարագաներ, որոնք գրեթե նույն գնով հնարավոր է ձեռք բերել այնտեղից: Մարտ-օգոստոս ամիսներին մեկնող ուսանողներին խորհուրդ է տրվում վերցնել հնարավորինս թեթև հագուստ: Նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ այնտեղ սեզոնային զեղչերին հնարավոր է մատչելի հագուստ գնել (ձմեռային հագուստների զեղչերը սկսվում են հունվարից և մարտին լիկվիդացիայով ավարտվում, իսկ գարնանային հագուստներինը՝ հունիս, ավարտվում հուլիսին),
2. Իտալիա ժամանելուց անմիջապես հետո ցանկալի է հեռախոսի քարտ ձեռք բերել: Խորհուրդ ենք տալիս գնել 10 եվրո արժողությամբ հետևյալ ընկերության՝ <https://www.iliad.it/offerte-iliad-mobile.html> քարտը, որը ներառում է անսահմանափակ բոպե, ինտերնետ, կարճ հաղորդագրություններ,
3. Ճաշարանի յուրաքանչյուր մուտքն արժե 3 եվրո: Խմբով սնունդ գնելու և պատրաստելու պարագայում հնարավոր է ավելի մատչելի վճարել, քանի որ խանութները մատչելի են, բայց պետք է հաշվի առնել նաև ծախսվող ժամանակը,
4. Տուն վարձակալելիս պետք է հաշվի առնել, որ կոմունալ ծախսերը ընդգրկված լինեն գումարի մեջ, քանի որ հնարավոր է, որ մարտից-մայիս ամիսներին ջեռուցման անհրաժեշտություն առաջանա, իսկ այդ պարագայում կոմունալ վճարները կարող է բարձր լինեն: Տուն վարձակալելիս կարելի է խորհրդակցել նաև իտալական կողմի համակարգողի հետ,
5. Կացարանում և տանը մնալու տարբերություններից նշենք, որ հանրակացարանում ուսանողական կյանքն ավելի հետաքրքիր է անցնում, այնտեղ բնակվելիս հնարավորությունն ավելի մեծ է շփվել տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ և բարելավել անգլերենն ու և իտալերենը,
6. Ուրտում արդեն իսկ աշխատող ուսանողները կարող են կենտրոնանալ գործնական աշխատանքներ իրականացնելու վրա: Յուրաքանչյուր ուսանող ինքն է պլանավորում իր ուսուցման ընթացքը: Կրթության որակն ապահովելու համար պետք է պահանջել ուսուցանողներից/լաբորատորիայի աշխատողներից հնարավորինս շատ տեղեկատվություն,
7. **Անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե պատվաստման 6 ամիսը լրանում է իսկ դուք դեռ Իտալիայում եք, ապա, հավանաբար, անհրաժեշտություն կառաջանա այնտեղ պատվաստման նոր դեղաչափ ընդունել:**


THE SEATS OF TUSCIA UNIVERSITY

For Erasmus and International students

Scroll to see all the locations of our university with all the various classrooms and blocks.



www.universogiovani.it



Via Santa Maria in Gradi 4

Departments:

DISUCOM: Department of Humanities, Communication and Tourism

DEIM: Department of Economics, Engineering, Society and Business Organization

You can find these classrooms:

-  From A to F
-  From 1 to 6
-  Class 12, 13, Radulet, Lecture Hall
-  Library
-  UniVerso Giovani's Office



Via del Paradiso 42

Department:

DEIM: Department of Economics, Engineering, Society and Business Organization

You can find these classrooms:

-  Classrooms **6** and **7**
-  From **2** to **4**, **Lecture Hall** and **Computer** classroom
-  Direct entry for classroom **2**
-  Classroom **5** and **computer's**



Via Camillo de Lellis

Departments:

DAFNE: Department of Agriculture and Forest Sciences

DIBAF: Department of Innovation in Biological, Agro-food and Forestry Systems

You can find these classrooms:

 **Block A**

 **Block B**

 **Block C**



Via San Carlo 32

Department:

DISTU: Department of Linguistic, literary, historical, philosophical and legal studies

You can find these classrooms:

-  From **3 to 5** and **7-8**
-  From **9 to 11**
-  **Lecture Hall**
-  Classrooms **2** and **6**
-  Classrooms **12, 13, 14a** and **14b**



Largo dell'università

Departments:

DEB: Department of Ecological and Biological Sciences

DIBAF: Department of Innovation in Biological, Agro-food and Forestry Systems

DISUCOM: Department of Humanities, Communication and Tourism

DEIM: Department of Economics, Engineering, Society and Business Organization

You can find these classrooms:


● Block B

● Block C

● Block D

● Block E

● Block F



Consortium of Civitavecchia

Departments:

DEB: Department of Ecological and
Biological Sciences

DEIM: Department of Economics,
Engineering, Society and Business
Organization

You can find these classrooms:

- 1st floor: **Study Room**
- 2nd floor: **Lecture Hall**
- 2nd floor: **Computer's**
- 2nd floor: **class 1 and 2**
- 2nd floor: **class 5**
- 3rd floor: **class 6, 3 and 4**



Sabinas University Site of Rieti

Department:

DAFNE: Department of Agriculture and Forest Sciences

You can find these classrooms:

 Via Angelo Maria Ricci 35/A
Degree Course in Mountain Sciences

